ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 072-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2025Թ-Ի II ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

Ընդունել ի գիտություն ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի 2025թ-ի բյուջեի 6 ամսվա կատարման վերաբերյալ հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

Հավելված
Փամբակ համայնքի ավագանու
2025թ-ի հուլիսի 10-ի թիվ 072-Ա որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակը կատարվել է.

ԵԿԱՆՈՒՏՆԵՐԻ ԳԾՈՎ՝

Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի եկամուտները նախատեսված 446837.7 հազ.դրամի դիմաց փաստացի կազմել են 396702.9 հազ. դրամ, կամ կատարողականը կազմել է 88.8 %: Նախորդ՝ 2024 թվականի համեմատությամբ եկամուտները ավել է կատարվել 11253.4հազ. դրամով՝ կամ կատարողականը կազմել է 103.0%:

Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի վարչական մասի եկամուտները նախատեսված (պլանավորված) 390894.6 հազ. դրամի դիմաց փաստացի կատարվել է 375530.9 հազ դրամ՝ ապահովելով 96.1 % կատարողական: Նախորդ տարվա համեմատությամբ բյուջեի վարչական մասի եկամուտները ավել է կատարվել 61310.4 հազ. դրամով՝ կամ կատարողականը կազմել է 119.5%:

Ֆոնդային մասի եկամուտները նախատեսված (պլանավորված) 111470.4 հազ. դրամի դիմաց փաստացի կատարվել է 21172.1 հազ դրամ՝ ապահովելով 19.0 % կատարողական:: Նախորդ տարվա համեմատությամբ բյուջեի ֆոնդային մասի եկամուտները պակաս է գանձվել 50056.9 հազ. դրամով:

2025 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի սեփական եկամուտները նախատեսվել են 91034.6 հազ. դրամ: Փաստացի հավաքագրումը կազմել 75670.9 հազ. դրամ, կատարողականը կազմելով 83.1 %: 2024թ-ի համեմատությամբ եկամուտները ավել է գանձվել 18682.8 հազ. դրամով: Նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է .132.8 % կատարողական:

Ներկայացվում է Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի սեփական եկամուտների վերլուծությունը ըստ հարկատեսակների /եկամտատեսակների/

Գույքահարկի ապառք համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների մասով – երկրորդ եռամսյակի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել 66.0 հազ. դրամ, կատարողականը կազմելով 66.0%: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 254.3 հազ. դրամ,կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 20.6 %-ով:

Հողի հարկի ապառքի մասով – երկրորդ եռամսյակի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 1450.2 հազ. դրամ, կատարողականը կազմելով 1450.2 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 290.1 հազ. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 125 %-ով:

Անշարժ գույքի հարկի մասով – երկրորդ եռամսյակի համար նախատեսված 20503.1 հազ. դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 8812.5հազ. դրամ, կատարողականը կազմելով 43.0 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 1105.3 հազ. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 114.3 %-ով:

Գույքահարկ փոխադրամիջոցների մասով – երկրորդ եռամսյակի համար նախատեսված 28280.6 հազ. դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 21741.4 հազ. դրամ, կատարողականը կազմելով 76.9 %: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 1874.0 հազ. դրամ,կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 92.0 %-ով:

Տեղական տուրքերի մասով – երկրորդ եռամսյակի համար նախատեսված 5249.2 հազ. դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 6472.9 հազ. դրամ, կատարողականը կազմել է 123.3 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 2240.5 հազ. դրամ, նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 152.9 %-ով:
Այլ եկամուտների մասով –երկրորդ եռամսյակի համար նախատեսված 37001.7 հազ. դրամի նկատմամբ փաստացի հավաքագրումը կազմել է 37128.0հազ. դրամ, կատարողականը կազմելով 100.3%:
Որից՝
1) Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարների մասով –երկրորդ եռամսյակի համար նախատեսված 6000.0 հազ. դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 3556.1 հազ. դրամ, կատարողականը կազմել է 59.3%: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 510.5 հազ. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 87.4%-ով:
2) Այլ գույքի վարձակալության մասով – երկրորդ եռամսյակի համար նախատեսված 500.0 հազ. դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 564.2 հազ. դրամ, կատարողականը կազմել է 112.8 %:Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 280.7 հազ.դրամ,կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 66.8%-ով:
3) Տեղական վճարների մասով – երկրորդ եռամսյակի համար նախատեսված 7100.0 հազ. դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 8904.2 հազ. դրամ, կատարողականը կազմել է 125.4 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 1482.8 հազ. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 120.0 %-ով:
4) Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարների մասով–երկրորդ եռամսյակի համար նախատեսված 1800.0 հազ. դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 3937.8 հազ. դրամ, կատարողականը կազմել է 218.8 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 1634.0 հազ. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 170.9 %-ով:
5) Համայնքի բյուջե մուտքագրվող այլ կատեգորիաներում չդասակարգված ընթացիկ տրանսֆերտների (նվիրատվություններ) մասով – երկրորդ եռամսյակի համար նախատեսված 9933..0 հազ. դրամի նկատմամբ փաստացի մուտքեր կազմել են 9933.0 հազ. դրամ, կամ կատարողականը կազմել է 100 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 9933.0 հազ. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 123.0 %-ով:
6) Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտների մասով –երկրորդ եռամսյակի համար նախատեսված 11668.7 հազ. դրամի նկատմամբ փաստացի մուտքերը կազմել են 10232.6 հազ. դրամ, կատարողականը կազմել է 87.7 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է կատարվել 4916.5 հազ. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 192.5 %-ով:

Պաշտոնական դրամաշնորհներ՝ դոտացիաներ.

Պաշտոնական դրամաշնորհների՝ դոտացիայի մասով – 2025թվականի երկրորդ եռամսյակի համար նախատեսված 299860.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 299860.0 հազ. դրամ, կատարողականը կազմել է 100 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է կատարվել 42627.6 հազ. դրամով, կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 116.6 %-ով:
2025 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե փաստացի հատկացումներ չեն եղել:

ԾԱԽՍԵՐԻ ԳԾՈՎ՝

Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի միջոցների հաշվին իրականացված ընդհանուր ծախսերը նախատեսված 662148.4 հազ. դրամի դիմաց

փաստացի կատարվել են 324883.7 հազ. դրամով, կամ կատարողականը կազմել է 49.0%: Նախորդ՝ 2024թվականի համեմատությամբ ծախսերը ավել է կատարվել 26829.3 հազ. դրամով՝ կամ նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 109.0 %: Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման (հոդվածների խմբերի) ունի հետևյալ պատկերը.

հազար դրամ

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի անվանումը	Տարեկան նախատեսված /պլանավորված/	Փաստաց /կատարված/	Կատարման %
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ	122235.4	95467.7	78.1
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ	94423.0	34233.4	36.3
ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	148108.9	114312.3	77.2
ԱՅԼ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	200.0	200.0	100.0
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ	1750.0	120.0	6.9
ԿՐԹԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ	200.0	0	0
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	250.0	0	0
ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՅԼ ՇԱՀՈՒՅԹ ՉՀԵՏԱՊՆԴՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	600.0	0	0
ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ	2400.0	1767.6	73.7
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ	200.0	16.0	8.0
ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	276124.1	85644.0	31.0
ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ	37000.0	1191.0	3.2
ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	3657.0	2372.0	64.9
ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ ԿԱՄ ԿԱՊԻՏԱԼ ԱԿՏԻՎԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ	10000.0	10000.0	100

ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	-35000.0	-20440.3	58.4
ԸՆԴԱՄԵՆԸ	662148.4	324883.7	49.0

Համայնքի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների ունի հետևյալ պատկերը.

հազար դրամ

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժնի անվանումը	Տարեկան նախատեսված /պլանավորված/	Փաստացի /կատարված/	Կատարման %
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	244946.6	151748.7	62.0
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	161536.2	23547.2	14.6
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	60490.0	47162.3	78.0
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	67177.9	36819.7	54.8
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	250.0	0	0
ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	36346.0	31207.3	85.9
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	89651.7	34278.5	38.2
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	1750.0	120.0	6.9
ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ	0	0	0
ԸՆԴԱՄԵՆԸ	662148.4	324883.7	49.0

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ